ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 37-Լ

«31» 03 2025թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական - վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող ու վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետի 1 թափուր հաստիքը ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությանն աջակցող բաժնի պետի 1 հաստիքով փոխարինելու, ինչպես նաև ՀՀ դատախազության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչության ավագ մասնագետի 1 թափուր հաստիքը ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությանն աջակցող բաժնի ավագ մասնագետի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 5-րդ գլխի 25-րդ կետի «Վարչության ավագ մասնագետ 2» բառերը փոխարինել «Վարչության ավագ մասնագետ 1» բառերով, իսկ «Ընդամենը 8» բառերը՝ «Ընդամենը 7» բառերով,

2) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 23-րդ գլխի 66-րդ կետի «Բաժնի գլխավոր մասնագետ 4» բառերը փոխարինել «Բաժնի գլխավոր մասնագետ 3» բառերով, իսկ «Ընդամենը 5» բառերը՝ «Ընդամենը 4» բառերով,

3) լրացնել 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 17.1-րդ գլուխը՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 17.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԲԱԺԻՆ

1.	Բաժնի պետ	1
2.	Բաժնի ավագ մասնագետ	1
	Ընդամենը	**2**

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր

քարտուղարին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**